Դ.

Այս աստընւորիս վըրայ սիրու տէրն ունի մեծ պալայ.
Մօլլան երբ զտըվան կուտայ, սիրու տէրն քան զուռ կու դողայ:
Մօլլա՛յ, գէմ հերիք կանչես, գիտացաք որ կու լուսանայ.
Երթամ աղաչեմ զԱստուած որ զիմ ցաւս ի քեզ փոխենայ:

Ե.

Եկին ու խապար բերին թէ ելեր քո եարն ու կուգայ.
Եկէք մենք ի դէմ երթանք, որ նորա սիրտըն չիմնայ.
Պագնենք զիր կարմիր երեսն, որ աշխա՛րհըս չէ գին նորա.
Առնունք զիր ոտից փոշին որ աչերս քաշենք թութիայ:

Զ.

Ըզգզած բամպակն ո՞վ տեսել՝ զարեգակն երեսք ի վերայ,
Զլուսինն ալ ի ծոցն առեր ու կղպել զկոճակն ի վերայ:
.....
.....

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Տեսայ զիմ հոգոյս հոգին, զարդարած, ու կ'երթար ի ժամ.
Ես ալ ի դէմիկն ելայ. «Ո՞ւր կ'երթաս, քո ժամն է հարամ.
Թէ դու զիս խապուլ անես, քեզ համար կանգնիմ ես ի ժամ,
Աղօթք 'ւ աղաչանք անեմ՝ ինչ որ քո ծոցուդ տիրանամ:

Բ.

Քո ծոցդ է տիրոջ մառան, քո ծըծերդ է սաղմոսարան.
Երթամ հաբեղայ լինամ եւ գամ ի քո ծոցըդ կենամ.
Այնչափ այբուբէն ասեմ՝ ինչ որ քո սիրուդ տիրանամ:

Գ.

Ես ձագ ծիծեռնիկ պիտ'ի, զօրն ըզքո տունըն մտնուի,
Ան բարձըր մօյտան չարտախդ ես ի հոն բուն մը շինէի.
Ոնց որ մութըն մութանար, ցածնայի ծոցըդ մտնուի.
Ոնց որ լուսըն լուսանար, բարձրնայի բունըս մտնուի:
Ես շարէ շապիկ պիտ'ի, զօրն ի բուն անձըդ կենայի,